ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Բնութագրումով որոշել հատկանիշը:**

Բնական և հասարակական ցանկացած երևույթ կամ օբյեկտ Երկրի մակերևույթի վրա ունի իր որոշակի հասցեն: Դրա փոփոխությունը կարող է փոխել նաև երևույթի կամ օբյեկտի բնույթը: Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից որի՞ն է վերաբերում այս բնութագրումը.

1) համալիրությանը
2) տարածականությանը
3) կոնկրետությանը
4) համընդհանրությանը

2 **Հյուսիսային կիսագնդում կեսօրին առարկաների ստվերները դեպի հորիզոնի ո՞ր կողմն են ուղղված:**

1) արևելյան
2) հարավային
3) արևմտյան
4) հյուսիսային

3 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը:**

1) 1:4200
2) 1:42000
3) 1:420000
4) 1:4200000

4 **Նկարում ի՞նչ քարտեզագրական պրոյեկցիա է պատկերված:**

1) հասարակածային
2) ազիմուտային
3) գլանային
4) կոնային

5 **Երկրի մակերևույթով անցնող և բևեռներն իրար միացնող երևակայական կիսաշրջագիծը կոչվում է.**

1) ուղեծիր
2) միջօրեական
3) առանցք
4) զուգահեռական

6 **Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող մարմինները հյուսիսային կիսագնդում իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են.**

1) աջ
2) ձախ
3) վերև
4) ներքև

7 **Գոնդվանայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**

1) Հյուսիսամերիկյանը
2) Սիբիրականը
3) Հարավամերիկյանը
4) Ռուսականը

8 **Ո՞ր օվկիանոսի ափերին են առավել ցայտուն դիտվում երկրաշարժերն ու հրաբխային ժայթքումները։**

1) Խաղաղ
2) Հնդկական
3) Ատլանտյան
4) Հյուսիսային սառուցյալ

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ։
2) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից։
3) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև։
4) Բևեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ։

10 **Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.**

1) իզոբաթ
2) իզոթերմ
3) իզոբար
4) իզոհիպս

11 **Ո՞ր ծովերն ունեն Համաշխարհային օվկիանոսի միջին աղիությունից անհամեմատ փոքր աղիություն:**

1) Կարայի և Բարենցի
2) Չուկոտյան և Բերինգի
3) Բալթիկ և Ազովի
4) Արաբական և Կորալյան

12 **«Լիճ — աշխարհամաս» զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Ուրմիա — Եվրոպա
2) Օնեգա — Աֆրիկա
3) Վերին — Ավստրալիա
4) Արալյան — Ասիա

13 **Շյուղախոտը և փետրախոտը ո՞ր զոնային են բնորոշ:**

1) անապատին
2) տափաստանին
3) սավաննային
4) տայգային

14 **Ի՞նչն է բնորոշ տայգային:**

1) պոդզոլային հողերի գերակշռությունը
2) լայնատերև ծառերի առատությունը
3) անբավարար խոնավությունը
4) հողի բազմամյա սառածությունը

15 **Եքիդնան և բադակտուցը ապրում են.**

1) Հարավային Ամերիկայում
2) Ավստրալիայում
3) Հյուսիսային Ամերիկայում
4) Եվրասիայում

16 **Ո՞ր օդային զանգվածներն են գերիշխում մերձարևադարձային կլիմայական գոտում:**

1) հասարակածային և արևադարձային
2) բարեխառն և անտարկտիկական
3) արևադարձային և բարեխառն
4) բարեխառն և արկտիկական

17 **Կղզի – պետություն է.**

1) Իսլանդիան
2) Իտալիան
3) Իսպանիան
4) Իրանը

18 **Էքսկլավ է.**

1) Լեսոտոն
2) Ալյասկան
3) Մալթան
4) Մոնակոն

19 **Բնակչության թվով գերխոշոր պետություն չէ.**

1) Հնդկաստանը
2) ԱՄՆ-ը
3) Ռուսաստանը
4) ՀԱՀ-ը

20 **Բնութագրումով որոշել գետը:**

Հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞ր գետն է.

1) Պեչորա
2) Լենա
3) Ենիսեյ
4) Օբ

21 **Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:
2) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:
3) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:
4) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:

22 **Ո՞ր ծովածոցը Բալթիկ ծովի մաս չէ:**

1) Ռիգայի
2) Բիսկայան
3) Ֆիննական
4) Բոտնիկական

23 **Օվկիանոսային ո՞ր հոսանքն է անցնում Աֆրիկայի հարավարևելյան ափերի մոտով:**

1) Սոմալիական
2) Մոզամբիկի
3) Կանարյան
4) Բենգելյան

24 **Ո՞ր շարքում է սննդային շղթան *սխալ։***

1) կարիճ — ճագարամուկ — կոբրա
2) ցեցե — այծքաղ — առյուծ
3) մուկ — կոբրա — արծիվ
4) ընձախոտ — քարայծ — հեպարդ

25 **Ո՞ր լիճն է գտնվում ամերիկյան Մեծ լճերի կազմում ։**

1) Մեծ արջի
2) Աթաբասկա
3) Մեծ աղի
4) Օնտարիո

26 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Մեծությամբ չորրորդն է՝ Հարավային Ամերիկայից հետո։
2) Ամենաբարձր և ամենացածր կետերը մայրցամաքի արևմուտքում են։
3) Մեքսիկական ծոցը գտնվում է մայրցամաքի արևելքում։
4) Հյուսիսային ափերը շատ թույլ են կտրտված, և կղզիները քիչ են։

27 **Բնութագրումով որոշել նեղուցը։**

Այդ նեղուցը միացնում է 2 օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից։ Ո՞ր նեղուցն է։

1) Բերինգի
2) Դարդանելի
3) Թորեսի
4) Մագելանի

28 **Ավստրալիայում ոչ մշտահոս գետերը կամ չոր գետահունները կոչվում են.**

1) վադիներ
2) սելավներ
3) քրիկներ
4) ուեդներ

29 **Ո՞ր կենդանին Անտարկտիդայում և հարակից ջրային տարածքներում *չի* ապրում։**

1) պինգվինը
2) սպիտակ արջը
3) ծովափիղը
4) կապույտ կետը

30 **Ո՞ր երկրներում է բնակչության առավել համաչափ տեղաբաշխում նկատվում։**

1) Ավստրալիա և Չինաստան
2) Մոլդովա և Գերմանիա
3) Ռուսաստան և Կանադա
4) Բրազիլիա և Եգիպտոս

31 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին։
2) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին։
3) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները։
4) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում։

32 **«Ժողովուրդ — ռասա» զույգերից ընտրել *սխալը։***

1) պարսիկներ — եվրոպեոիդ
2) արաբներ — նեգրոիդ
3) շվեդներ — եվրոպեոիդ
4) սենեգալցիներ — նեգրոիդ

33 **Տարբեր ջերմատվությամբ օժտված ռեսուրսների տեսակները միմյանց հետ համեմատելու նպատակով պայմանականորեն ընդունված համարժեքային միավորն անվանում են.**

1) պայմանական նշան
2) պայմանական գիծ
3) պայմանական միավոր
4) պայմանական վառելիք

34 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Գիտատար և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած արտադրությունները կենտրոնացած են զարգացող երկրներում։
2) Գյուղատնտեսական մեքենաշինության ձեռնարկությունները տեղաբաշխված են զարգացած հողագործության շրջաններում։
3) Ավտոմեքենաշինության տեղաբաշխման վրա մեծ է հումքային ու վառելիքաէներգետիկ ռեսուրսների ազդեցությունը։
4) Քիմիական արդյունաբերությունն ունի խիստ սահմանափակ հումքային բազա։

35 **Աշխատողների թվով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.**

1) մեքենաշինությունը
2) թեթև արդյունաբերությունը
3) մետաղաձուլությունը
4) սննդի արդյունաբերությունը

36 **Արևմտյան Եվրոպայի պետություններից չէ.**

1) Ֆրանսիան
2) Գերմանիան
3) Ֆինլանդիան
4) Շվեյցարիան

37 **Հարավային Եվրոպայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ընդգրկում է Պիրենեյան, Ապենինյան և Փոքր Ասիա թերակղզիների երկրները:
2) Տարածաշրջանում հաճախակի են երկրաշարժերը, կան գործող հրաբուխներ:
3) Հարուստ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:
4) Արևադարձային կլիմայական գոտու սահմաններում է:

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:**

1. Լեհաստան	ա. Բուխարեստ
2. Հունգարիա	բ. Պրահա
3. Ռումինիա	գ. Վարշավա
4. Չեխիա	դ. Բուդապեշտ

1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

39 **Ո՞ր պետությունն է գտնվում երկու աշխարհամասում:**

1) Թուրքիան
2) Իրաքը
3) Սիրիան
4) Իրանը



քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր թերակղզին է պատկերված Բ տառով:**

1) Կալիֆոռնիական
2) Լաբրադորյան
3) Ալյասկա
4) Ֆլորիդա

41 **Քարտեզ 1-ում ո՞ր ծոցն է պատկերված Է տառով:**

1) Մեքսիկական
2) Կալիֆոռնիական
3) Ֆիննական
4) Գվինեական

42 **«Լճեր — գոգավորության ծագում» զույգերից ընտրել *սխալը:***

1) Փարվանա, Խանչալի — հրաբխային
2) Քարի, Սև — սառցադաշտային
3) Սևան, Վանա — տեկտոնահրաբխային
4) Ուրմիա, Ակնա — սողանքապատվարային

43 **Ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Արեգունու և Սևանի լեռները ՀՀ հարավային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:
2) Փամբակի և Բազումի լեռները ՀՀ հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:
3) Բարգուշատի և Վայքի լեռներն ունեն ծալքաբեկորային ծագում:
4) Գեղամա և Վարդենիսի լեռներն ունեն հրաբխային ծագում:

44 **Ո՞ր մարզն է առավել խտաբնակ:**

1) Լոռու
2) Արմավիրի
3) Արարատի
4) Կոտայքի

45 **ՀՀ-ում տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցության վրա *չի* ազդել.**

1) արտագնա աշխատանքի մեկնելու հանգամանքը
2) տղամարդկանց շրջանում բարձր մահացությունը
3) բնակչության կրթական մակարդակը
4) արցախյան ազատամարտը

46 **ՀՀ ո՞ր քաղաքն է տուֆի արտահանման խոշոր կենտրոն:**

1) Ապարան
2) Արթիկ
3) Սպիտակ
4) Բերդ

47 **Ո՞ր քաղաքի մոտ կա պղնձամոլիբդենային հանքավայր.**

1) Աբովյան
2) Աշտարակ
3) Ագարակ
4) Արտաշատ

քարտեզ 2

48 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով:**

1) Կոտայք
2) Արագածոտն
3) Շիրակ
4) Գեղարքունիք

49 **Քարտեզ 2-ում ո՞ր հանքային աղբյուրն է նշված Գ տառով:**

1) Դիլիջանի
2) Լիճքի
3) Հանքավանի
4) Բջնիի

50 **Համախառն արտադրանքի ծավալով ԼՂՀ արդյունաբերության առաջատար ճյուղն էր.**

1) հանքագործական արդյունաբերությունը
2) թեթև արդյունաբերությունը
3) փայտամշակման արդյունաբերությունը
4) մեքենաշինությունը

51 **Ո՞ր մայրցամաքում է անապի գոտին:**

1) Հյուսիսային Ամերիկա
2) Ավստրալիա
3) Հարավային Ամերիկա
4) Եվրասիա

52 **Տրված բնական ռեսուրսներից որո՞վ են լեռնային տարածքները համեմատաբար աղքատ:**

1) ջրաէներգետիկ
2) մետաղային
3) ռեկրեացիոն
4) վառելիքային

53 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) կարի արտադրությունը
2) սարքաշինությունը
3) կոնյակի արտադրությունը
4) պղնձաձուլությունը

54 **Ի՞նչ դեր ունի մթնոլորտում տարածվող օզոնի շերտը.**

1) կլանում է Արեգակի ուլտրամանուշակագույն և տիեզերական ճառագայթները
2) ապահովում է ներքնոլորտում օդային զանգվածների շրջանառությունը
3) խոնավ եղանակներին առաջացնում է լուսաքիմիական սմոգ
4) Երկրի վրա թթվածնի ստեղծման միակ աղբյուրն է

55 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) գետերի ջրերում լուծված հանքային աղերը
2) գեյզերների ջրերում լուծված հանքային աղերը
3) հարթավայրային գետերով տեղափոխվող անտառանյութը
4) քիմիական պարարատանյութերը

56 **Գրել նավարկելի ջրանցքների համարները:**

1) Ֆլորիդայի
2) Բերինգի
3) Պանամայի
4) Կուկի
5) Քիլի
6) Զոնդյան
7) Սուեզի
8) Թաթարական

57 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են:**

1) Ֆինլանդիա
2) Շվեդիա
3) Դանիա
4) Լատվիա
5) Ճապոնիա
6) Մեծ Բրիտանիա
7) Եգիպտոս
8) Իսպանիա

58 **Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով ուղղափառ են:**

1) բելառուսներ
2) սերբեր
3) ֆրանսիացիներ
4) շվեդներ
5) ավստրալացիներ
6) իսպանացիներ
7) չեխեր
8) բրազիլացիներ

59 **Գրել այն երկրների համարները, որոնք ուրբանիզացման առավել բարձր մակարդակ ունեն:**

1) Աֆղանստան
2) Արգենտինա
3) Հնդկաստան
4) Չինաստան
5) Ճապոնիա
6) Մոզամբիկ
7) Բանգլադեշ
8) Բելգիա

60 **Գրել Արաքսի ավազանին պատկանող վտակների համարները**:

1) Մակու
2) Ճորոխ
3) Գետիկ
4) Զորագետ
5) Մեծամոր
6) Հրազդան
7) Խաչենագետ
8) Ողջի

61 Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային *չեն:*

1) Վանաձորի
2) Քանաքեռի
3) Մեծամորի
4) Արզնիի
5) Զորագետի
6) Տաթևի
7) Շամբի
8) Սևանի

62 Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով:

1) Ինդոնեզիա
2) Հնդկաստան
3) Բանգլադեշ
4) Չինաստան

63 ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով:

1) Ախուրյանի 2) Կեչուտի 3) Սպանդարյանի

64 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե. 40˚-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 70˚-ի: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով:

(65-66) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 13˚C է, գագաթին՝ 1˚C: Ստորոտը ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6˚-ով).

65	Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

66	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67	Որքա՞ն է երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե այդ երկրի բնակչության թիվը 2,5 մլն է, բնական աճի գործակիցը՝ 10 ‰:

68 **Երկրի գետային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 9 մլն տ·կմ է, իսկ բեռների փոխադրման միջին հեռավորությունը՝ 150 կմ։ Որքա՞ն է տարեկան փոխադրվող բեռների ծավալը։**

69 **Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Հարուստ է ածխի և երկաթաքարի պաշարներով։
2) Սև մետաղաձուլությունը զարգանում է բացառապես ներկրվող հումքի հիման վրա։
3) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում։
4) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը։
5) Թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնը Շանհայն է։
6) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի ու ցեմենտի արտադրությամբ։

70 **ՀՀ Արագածոտնի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Աչքի է ընկնում գինու, կոնյակի, կաթի և կաթնամթերքի արտադրությամբ։
2) Հողաբարելավման կարևոր տեսակներից է ոռոգումը և քարամաքրումը։
3) Միջին և բարձր գոտիներում առավել զարգացած են խաղողագործությունն ու պտղաբուծությունը։
4) Տնտեսության զարգացման գործում մեծ դեր է խաղում արևմտյան մասով անցնող Երևան — Թբիլիսի երկաթուղին։
5) Անասնապահության ենթաճյուղերից առավել զարգացած են խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը։
6) Ոռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել Թալինի և Արզնի-Շամիրամի մայր ջրանցքները։